

## ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

**Համելիս Ամենօրնայ, Յունուար,** փետրուար.—«ԲՌՈՒԱՍԱՍԱՆԻ կոթողի հայերի հոգիոր վարչութեան մասին պլ. Պ. Տիւրեան տալիս է ամփոփ աեղեկութիւնները Առաջ հնք բերում մի քանի հետաքրքրական կը տորունը Բուն Անդրկովկասի հայկաթուլիկների թեմը՝ Տիւրատովի եպիսկոպոսներից է կախուած և կազմուած է 4 վիճակներից՝ 1) Խամացը-խայի՝ 16 եկեղ. 2) Ալիաքալաքի՝ 12 եկեղ. 3) Լոռուայ՝ 5 եկեղ. 4) Ալեքսանդրովութիւն՝ 13 եկեղ. Ընդամենը՝ 46 եկեղեցին որոնց ժխականների ընդհանուր թիւն է 33,216 հոգի Վերոյիշեալ 4 վիճակներից զուրս, Թիվին և Կովկասի այլ քաղաքների մէջ գտնուուղ կաթոլիկ հայերի թիւըն առնուազն հաշտում է 2 հազար Բացի այդ, Թիվին կաթոլիկ հայերի թիւը (Սիմֆերովոլի վիճակ) 2057 է: Վերոքրեալ հաշիւններից զուրս է Թուում Արգուկինի թիւմը, որին Էնթարկուած են Արգամուշի, Կարսի և Բաթումի վիճակները: Արգամինի թիւմն անկախ է Տիւրատովի եպիսկոպոսներից և լուելայն շարսնակում է մաս դեռ ևս Կ. Պոլսի պատրիարքական աթոռի իրաւասութեան տակ. և միայն այժմ, երբ 1903 ապրիլ 14-ի կայսերական կարգադրութեամբ Հոռոմի Աթոռի հետ համաձայնութիւն է գոյացած՝ Արգուկինի թիւմն էլ կը միանայ Անդրկովկասի թեմին և կը մասնէ «Հայոց Առաքելական կառավարչի» վարչութեան տակ: Արգումինի թիւմի մէջ կայ 15 եկեղեցի, և 12000 ժխական: Այդպիսով Ռուսաստանի

հայ կաթոլիկների թիւը կուր հաշուով հաւասար է 50,000-ի:

Գիտական տերմինները մեզանուում դեռ շատ խառնաշփոթ և յաճախ սխալ գործածութեան մէջ են. պէտք է առանձին ուշադրութիւն այդ բանի վրայ, և Վիէննայի հայերը, ինչպէս երկում է, սկսել են զրադական այդ հարցով. «Հանգչս Ամսօրեայում շատ համոզեցուցիչ կերպով ապացուցում է որ բարի և կարամուի ծառերն ճիշտ համապատասխանում են, առաջինը՝ լատինական populus pyramidalis-ին իսկ երկրորդը՝ populus tremula-ին:

«Ծաղիկը. թիւ. 8.—Քննակառութեան դէպ պատասխանելով այդ հանդէսը գործ է ածում բանակուուական այնպիսի ձեռք և ոճեր և ոճեր, որոնք վերաւորական են և չեն պարզում զրական խոդինները, այլ միայն անձնական հոգի վրայ են գնում հարցերը: Այդպէս, օրինակ, ահա ինչ լեզուով է խօսւում պլ. Մ. Բերբերեանի մասին, որ գծբախտութիւն է ունեցել Սիսպիլի տաղանդի մասին տարբեր կարծիք ունենալ, քան «Ծաղիկը» յօդուածագիրը: «Պ. Մ. Բերբերեանին մէնք բնաւ նկատի չէինք առնէր եթէ երբէք զրուած տեղը մար և հարկ չախնուէք նաև թրքանայ ընթերցողներուն ներկայացուելու: Բայց քանի որ անգամ մը հրապարակուեցաւ մեր մէջ, կ'արժէ որ քիչ մը ծանօթահանք անոր մասին, եթէ ոչ ուրիշ բանի, զոնէ ցրելու համար կարգ մը սխալ հասկացո-

դութիւններ որոնք հակառակ վճռական և անվերաբնների շեշտով մը ներկայացուած ըլլալուն, շուտ կը մատոնն ինչ տեսակ ուղեղէ և դատապաթենէ բղիած ըլլանին, երկրորդական միջակութիւն մըն է արդէն այդ պ. Բերբերեան՝ որ մօտաւորապէս տասը տարիէ իվերքնադատի գործ կը կատարէ Կովկասի մէջ, և որուն սակայն ոչ մէկ լուրջ թերթ, ոչ մէկ լուրջ հանդէս տակաւին չէ զիջած իր էջերը տրամադրելու իր վերջին ապատանն է այն գրականութեան - անկելանոցը՝ զոր Գիւտ քանանայ Աղանանց կը հրատարակէ, և որ սակայն երեւեն թիվլիսի Մ'եղուին պէս գերազոյն որջը կը դառնայ բոլոր սահմանափակ, տէտ և մանաւանդ յետադիմական գրողներուն (եր. 401): «Բերբերեանի գնահատութիւնը սըխալ է և անհիմ» պ. Բերբերեան բանաստեղծութենէ ու բանաստեղծական գործերէ այնքան բան կը հասկրնայ, որչափ հասարակ պատճեփոյ մը պիտի հասկնար նկարչութենէ» և այլն եայլն - «ըրբ պէտք է մեր գրականութեան մէջ վերջանան այդ ձեփ բանակութիւները, Մեզանում զիմեն կամ անհամու չափազանցը շողորդութիւններ շայլել կամ հայեցել, դա զզուելի է, ինչպէս և այն սովորութիւնը, երբ մեր թրքանայ թերթերը այս կամ այն մասնաւոր անձերի գործերին հասարակական նշանակութիւններ լինածայում: Օրինակ, հալ հասարակութեան ինչ պէտքն է, թէ նշան Պապիկեան գրատան վարիչներից այս կամ այն մէկը ում հետ է ամուսնանում, ի՞նչ եկեղեցում է տեղի ունեցել պատակազորութեան հանդէսը, ում նախագահութեամբ, ով ձեռընտութիւններ կատարեց, ով էր կնքահայրը և այլն և այլն, թող «Մաղկի» զեկավարները իրանց կնքակցութիւննէլ շնորհակալութիւններն էլ որքան ուզում են յայտնեն «Երկու կողմերուն» էլ բայց նրանց տանը,

ճաշի վրայ և այլն, և ոչ «գրական, գիտական և գեղարուեստական» մի հանդիսի էջերում, նորբ պէտք է լըջանան մեր թրքանայ զրողները...»

**Եիրակ.** — Այս է անունը այն ամսթերթի, որ ներկայ տարուայ յունուարից սկսած լոյս է տեսնում Եղիպատոսի Ալէքսանդրիա քաղաքում: Մենք մեր ձեռքի տակ ունինք նրա առաջին համարը միան, հետեւաբար այժմ անկարող ենք որոշ բան ասել նրա ուղղութեան, նրա սկզբունքների և ներկայացրած զօշակի մասին: կը սպասենք յաջորդ թիւերին, աւելի արդար կերպով զատելու համար: Առաջին համարի ընթերցումից մեր անմիջական տպաւորութիւնը «Եիրակ»-ի մասին այն եղաւ, որ Ալէքսանդրիայում հրատարակուող հանդէսը ներկայանում է մեզ առհասարակ նոյն յատկութիւններով և թերութիւններով, որով բնորոշում են առհասարակ թրքանայ պարբերականները: «Գրականութեան» — այսինքն լուրջ ու ամուր գաստիարակութիւնցորդ ուղեղների անիրական, արտադրութիւններին, հողից կարուած մարգկանց երեակայութեան խաղերին շատ տեղ է տրուած: Եւ, ի՞նչ պէս ամեն արտասահմանում հրատարակուող թերթ, «Եիրակը» իրան նպատակակիչս ընտրած է «ազգային վերածնումի», գործին աշխատել Բայց ի՞նչպէս, ի՞նչ միջոցով: Ահա մի հատուած Եիրակի «հաւատոյ-հանգանակից», որից պէտք է պատասխան գտնէինք:

**«Եիրակ»-ի ուղղութիւնը պիտի ըլլայ, գրագէտներու ընտրելախումբի մը օգնութեամբ աշխատել հայ պերութեանց վերականգումին արտասահմանի մէջ: Անկարեի ըլլայով որ ներկայ ժամուն հայ գրողը չանցքագանայ հայրենիքի մշտահեծ ցաւերուն, անոնցմէ իր յուղումին արիւնը և մտածմանց հիմքը չձեռք: «Եիրակ» պիտի ընէ ազգային գրականութիւն մը, առանց մտնելու**

կուսակցական նկատութերու և մաս-  
նաւորութեանց մէջ լայն պիտի բա-  
նայ իր էջերը բոլոր ճշմարիտ ու  
վաւերական գրադէսներուն առջեն,  
ընծայելով այսպէս անմնց գերազանց  
միջոցը կատարելու իրենց վրայ  
ծանրացող պարտքն հանդէպ հայ  
գպրութեանց և անով հանդէպ աղ-  
պային վերածնութիւնին գործին»:

«Եթակ պիտի ընէ աղպային  
գրականութիւն մը» այսպէս են ա-  
սում Փարաւոններու երկրում ամսա-  
թերթ հրատարակող մեր եղբայրնե-  
րը, Բայց ի՞նչ են հասկանում շաղ-  
գային գրականութիւնն տարամ ու  
առաձգական խօսքով, Միթէ աղպա-  
յին գրականութիւն չեն այն ըոլոր  
արտադրութիւնները, որ լոյս են  
տեսնում հայ լեզուալի Ներկի շաղ-  
գային գրականութիւնն ասելով հաս-  
կանում են հայրենասիրականն գրա-  
կանութիւն, Բայց կայ հայրենասի-  
րութիւն և հայրենասիրութիւն...

Անա այստեղ առաջ է գալիս ար-  
դէն սկզբունքի, գաղափարի ընա-  
րութիւնը, որը և զոյն է տալիս  
հայրենասիրութեան, իսկ «Եթերա-  
կի վարիչները ոչ մի խօսք չեն ա-  
սում սկզբունքի, գաղափարի մասին  
և բաւականանում են առաձգական  
շաղգային գրականութիւն» խօսքով  
ծւ սակայն մենք չենք զարող չնկա-  
տել, թէ ազատ երկրում, անկաշ-  
կանդ մասուլի համար, որքան մեծ  
գործ կայ անելու, որքան մեծ պար-  
տականութիւն կայ կատարելու հան-  
դէպ արտասահմանի հայութեան, ո-  
րը գժբախտաբար ապրում է մաքի  
նոյն վիճակով և նոյն ձգութմերով,  
սրով ապրում են բռնութեան տակ  
կըած իրանց հայրենակիցները:

Այսքան՝ «Եթերակ»-ի ուղղութեան  
մասին, Այժմ տեսնենք թէ ի՞նչ նիւ-  
թեր է տալիս «հայ դպրութեանց  
վերականգնութիւն» նպաստելու հա-  
մար:

Առաջին յօդուածն է երուանդ  
Օտեանի՝ «Աղդային Բարերարը, Դա  
թիւրբահայ, աւելի ճիշտ, պոլահայ

կեանքից վերըրած մի պատկեր է,  
ամենից յաջողը ամբողջ ամսագրում  
երկացած գրուածքների մէջ, Պէտք է  
ասել սակայն, որ մենք կարդացել  
ենք այդ թիւրբահայ գրողից աւելի  
ուժեղ, ու աւելի սրամիս էջերը  
«Աղդային Բարերար»-ի մէջ, գործէ  
իրականութեան չափազանցութիւնը,  
գոյների խտացումը պատկերին առ-  
մվս է փոքր ինչ արհեստական նկա-  
րագիր:

Այդ արհեստական, շինծու նկա-

րագիրը շատ աւելի խոշոր չափերով  
կրում է իր մէջ յաջորդ պատկերը,

«Մարն զմանուկը մոռցաւ» է ծեղա-  
նարի, Այդ ինչպէս հեղինակն է ա-  
նուանած՝ բարիւնոս պատկերի մէջ

ամեն ինչ կեղծ է. և անձերի հոգե-  
բանութիւնը, և միջավայրի ցուցա-  
զումը և այն ոճը, որով գրած է:

Ա. Արքիարեանի «Հողվրդիքը»  
եթէ ոճի ու դարձուածքների կա-

մաւոր ու անձաշակ իրթնութիւնն  
ու արհեստականութիւնը չունենար,

կարող էր գործէ հետաքրքրութեամբ  
կարգացուել Այդ գրողի մէջ մենք

այլևս չենք ճանաչում ընաւ ոչ  
հայրենակիցն և ոչ էլ «Հայրենիթի»  
ջղուտ ու խայթող հրապարակեախո-  
սին...

«Եթերակ»-ի մատեալ նիւթերի  
վրայ շարժէ կանգ առնել: Միայն՝

րուց լա ծոնոս ծոնեհ, յիշենք մի աղ-  
շեցուցիչ գրուածք՝ «Մենութեան տե-  
սիլիներ» որի հրատարակութեան ա-  
ռիթով իմբագրութիւնը հետեւել

նախնան ապշեցուցիչ ծանօթութիւ-  
նը աւելցնում է. «Այս վերնագրով  
բախտը (?) ունինք հրատարակելու

քանի մը հատուածներ մեր ամենէն  
ինքնասիպ ու աղպանդաւոր երիտա-

ստրդ գրադէսներէն միայն անտիպ  
երկասիրութենէն: Զուտ արուեստի

այս էջերը պիտի կրնան ճաշակ  
մը տալ ամբողջ գործին վրայ, որ  
թերեւս չուշանայ, ուրիշ անունի մը

տակ, մօտերս լոյս տեսնելուաւ:

Այդ «Ինչնատիպ ու աղպանդա-  
ստրդ գրադէսը» մեզ թւում է, որ ու-

ըիշ ոչ այլ ինչ է բայց եթէ անքը-  
նութիւնից ու գրական անկարողու-  
թիւնից տանջուող մի անձ, որին՝  
չգիտենք ինչու, «Շիրակ»-ի խմբա-  
գրութիւնը այդքան անսահմած գո-  
վեսաներ է շատրւում: Մենք էլ մեր  
ընթերցողներին ճաշակ մը ապառ-  
համար ց զուտ արուեստի այդ է-  
շիրից, առաջ ընթենք մի քանի հա-  
տուածներ:

«Բայց, մէ, իրաւ, ինչպէս չէի  
գիտեր: Մութ պատուանին ապա-  
կիին մէջ՝ գիշերին վրայ բացուած  
կարագոյններուն միջև՝ կողմանակի  
լուսաւորուած ստուեր մը կայ. իմ  
ցոլքս է ես եմ. եսս է. ինչ զուար-  
ութիւն, եթէ ոչ արամութիւն: Նո-  
ւեղին խաւարին մէջ աղօտագուուած  
են է: Մարմինիս պէս կը գիտեմ  
զինքը, որ իմ աննիւթացում, իմ  
իշէական չութիւնն կը թուփ. իս-  
կութեանս մէկ արատացումը, իր գի-  
ծերուն ճկուն ու զուապ խաղին սառ-  
չումը կը միանճացնէ զայն մութ  
գիտեաններուն աարտամ սուցին մէջ  
որ անորոշապէս կէախառնուի ան-  
ջրպետին մըրկալի սեռութեան, և  
ուրիշ կը պապիրանայ կողմանակ  
գլուխին ռամպրանկարը. ամոյն, իր  
տեսլային անզայտութիւնը նոճինե-  
րուն գիշերովը թափանցուածու:

Եւ «Շիրակ»-ը այս կարգի ար-  
տադրութիւնները աստուածացը-  
նելուց յետոյ, գեւան շանթեր է ար-  
ձակում Պոլուում կատարուած գրա-  
կանութեան դէմ: Անկեղծօրէն սաե-  
լով մենք նզիպառնի և Պոլսի հրա-  
տարակութիւնների մէջ մեծ աար-  
բերութիւն չենք նկատում: Բայց այս  
վեշինները զննէ այն արգարացու-  
մըն ունին, որ ապրում են մի այն-  
պիսի միջավայրում, ուր նըանց լե-  
զուէ և մատծումի վրայ դրուած է  
մի խոշոր քար...

Սիսուան:—Այս էլ մի ուրիշ  
ամսաթերթ է, որ՝ ներքինով թէ ար-  
տաքինով աւելի ճշճմա՞ սկսել է լոյս  
տեսնել այս մինոյն աարուայ սկզբից  
մինոյն քաղաքում: Մենք չենք հաս-

կանում, թէ ինչ են մտածում մեր  
թիւրքահայ եղբայրները իրանց ա-  
ռանձին թերթ հրատարակելու մո-  
լութեան մասին, բայց մենք խոս-  
տվանում ենք, որ դա մեզ համար  
առանձազն ուժերի անպէսք, ամօ-  
թալի մախումէ: Մլլթէ «Սիսուան»-ի  
և «Շիրակ»-ի ղեկավարները չէին  
կարող միանալ մի աւելի կանոնա-  
ւոր գործ մէջտեղ հանելու համար:  
Ի՞նչն է նրանց բաժանում, իրարից  
հեռացնում: Գաղափարի, ուղղու-  
թեան, սկզբունքների աարքերու-  
թեանը, Բայց քիչ վերև, «Շիրակ»-ի  
մասին խօսելիս, մենք յայտնեցինք,  
որ այդ ամսաթերթը ոչ մի սկզբունք,  
ոչ մի ուղղութիւն չէ նախագծած  
իր առաջ, որ միայն բաւականա-  
նում է «ազգային գրականութիւն»  
անելու անորոշ յաւակնութեամբ: Ա-  
հաւասիկ «Սիսուան»-ը, որը նոյն-  
պէս «ազգային գրականութեան» ա-  
նունով հրապարակ եկած է, կար-  
ծում ենք: Ինչու ձեռք ձեռքի չեն  
գործում: Եթէ իրանց առաջ ունե-  
նային որոշ ծրագիրներ իրացործե-  
մեք՝ իրանց բաժանումը կարող էինք  
ընթանել: Բայց որ այդ արգելքը  
գոյութիւն չունի... Սըա հետևանքը  
այն կը լինի որ երկու ամսաթեր-  
թերն էլ մի քանի ամիս կեանք ու-  
նենալուց յետոյ կ'աներեւոյթանան  
այնպէս, ինչպէս երևացել էին: Իսկ  
մէջտեղում կը մնայ մի հիւանդ ե-  
րեւոյթ: Խմբագիր-անօրէն զանա-  
լու մարմաջը: Մենք կարծում ենք  
որ ժամանակ է ճիշճ ժամանակը—  
վերջ գնելու այդ կարգի փոքրիկ,  
փոքրացնող մահողութիւններին և  
նույիրուելու անկեղծօրէն ու եռան-  
գագին մի գժըախս ժողովուրդի, որ  
օրէօր մեռնում է լրջմիտը, կանքի  
երևոյթները քննող, զերակենդա-  
նացնող խօսքի ուգործի պակասից: